Հովհաննես Թումանյան

Կիկոսի մահը

Մի աղքատ մարդ ու կնիկ են լինում, ունենում են երեք աղջիկ:

Մի օր հերը աշխատելիս է լինում, ծարավում է, մեծ աղջկանը ջուրն է ղրկում: Էս աղջիկը կուժն առնում է գնում աղբյուրը: Աղբրի գլխին մի բարձր ծառ է լինում: Էս ծառը որ տեսնում է՝ իրեն իրեն միտք է անում .

Հիմի որ ես մարդի գնամ ու մի որդի ունենամ, անունն էլ դնենք Կիկոս: Կիկոսը գա էս ծառին բարձրանա ու վեր ընկնի, քարովը դիպչի մեռնի . . .

Վա՜յ, Կիկոս ջան, վա՜յ . . .

Տեղնուտեղը ծառի տակին նստում է, սկսում է սուգ անել:

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գըդակը պոպոզ,
Անունը Կիկոս .
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին . . .
Վա՜յ, Կիկոս ջան,
Վա՜յ, որդի ջան . . .

Մերն սպասում է, սպասում, տեսնում է չեկավ, միջնեկ աղջկանն է ղրկում: Ասում

է .

Գնա՛ մի տես, քույրդ ընչի ուշացավ:

Միջնեկ աղջիկն է գնում:

Մեծ քույրը սրան որ հեռվից տեսնում է՝ ձենն ավելի է բարձրացնում: Արի՛, արի՛, անբախտ մորքուր, տես քո Կիկոսն ինչ եղավ:

Ի՞նչ Կիկոս:

Բա չես ասիլ .

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գըդակը պոպոզ,
Անունը Կիկոս .
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին . . .
Վա՛յ, Կիկոս ջան,
Վա՛յ, որդի ջան . . .

Վա՛յ, Կիկոս ջան, վա՛յ, գոռում է միջնեկ քույրը, նստում է մեծ քրոջ կողքին ու սկսում են միասին սուգ անել:

Մերն սպասում է, սպասում, տեսնում է չեկան, պստիկ աղջկանն է ղրկում: Ասում է .

Աղջի, մի գնա տես քույրերդ ինչ եղան: Գնացին ետ չեկան:

Հիմի պստիկ աղջիկն է գնում: Գնում է տեսնում երկու քույրն էլ աղբրի գլխին նստած լաց են լինում:

Քա՛, ընչի՞ եք լաց ըլում:

Մեծ քույրը թե՝ բա չես ասիլ .

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գըդակը պոպոզ,
Անունը Կիկոս .
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին . . .
Վա՛յ, Կիկոս ջան,
Վա՛յ, որդի ջան . . .

Վա՛յ քու մորքուրին, Կիկոս ջան, վա՛յ, սա էլ է գլխին տալիս ու մյուսների կողքին նստում, ձեն ձենի տալիս: Մերն սպասում է, սպասում, տեսնում է՝ աղջիկները չեկան, ինքն է գնում:

Հեռվից իրենց մորը տեսնում են թե չէ՝ երեք աղջիկն էլ կանչում են .

Արի՛, արի՛, անբախտ տատի, տե՛ս թոռանդ գլուխն ինչ է եղել:

Ի՞նչ թոռ, ա՛յ աղջկերք, ի՞նչ է պատահել:

Մեծ աղջիկը թե՝ բա չես ասիլ, ա՛յ մեր .

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գըդակը պոպոզ,
Անունը Կիկոս .
Վեր ելավ ծառին,
Ցած ընկավ քարին . . .
Վա՛յ, Կիկոս ջան,
Վա՛յ, որդի ջան . . .

Վա՛յ, քոռանան քու տատի աչքերը, Կիկոս ջան, մերն էլ ծնկանը զարկում է,

նստում է աղջիկների կողքին, սկսում է նրանց հետ սուգ անել:

Մարդը տեսնում է կնիկն էլ գնաց աղջիկների ետևից, ու սա էլ չեկավ: Ասում է՝ մի գնամ տեսնեմ՝ էս ինչ պատահեց, որ սրանք իրար ետևից գնացին մնացին աղբրումը:

Վեր է կենում գնում:

Կնիկն ու աղջկերքը հենց սրա գլուխը հեռվից տեսնում են թե չէ, ձեն են տալի .

Արի՛, արի՛, անբախտ պապի, արի տես՝ քու Կիկոսի գլուխն ի՞նչ է եկել . . . վա՛յ քու Կիկոսին . . .

Ի՞նչ Կիկոս, ի՞նչ եք ասում:

Մեծ աղջիկը թե՝ բա չես ասիլ, ա՛յ հեր .

Գընացի մարդի,
Ունեցա որդի,
Գըդակը պոպոզ,
Անունը Կիկոս .
Վեր ելավ ծառին,

Ցած ընկավ քարին . . .
Վա՛յ, Կիկոս ջան,
Վա՛յ, որդի ջան . . .

Վա՛յ, Կիկոս ջա՛ն, ծնկներին տալիս են ու սուգ են անում մեր ու աղջկերք:

Սրանց միջի խելոքը հերն է լինում: Ասում է .

Ա՛յ հիմարներ, ի՞նչ եք նստել էստեղ ու սուգ եք անում: Ինչքան էլ սուգ անեք, ինչքան էլ լաց ըլեք, հո Կիկոսն էլ կենդանանալու չի: Վեր կացեք, եկեք գնանք մեր տունը, մարդ կանչենք, ժամ ու պատարագ անենք, Կիկոսի քելեխը տանք,

լացով ի՞նչ պետք է անենք: Աշխարհքի կարգ է, ինչպես եկել է, էնպես էլ պետք է գնա:

Դու մի՛ ասիլ՝ սրանց ունեցած չունեցած չորսոտնանին մի եզն է լինում, ունեցած փոշին էլ՝ մի քթոց ալյուր:

Գալիս են էս եզը մորթում, էս մի քթոց ալյուրն էլ հաց թխում, ժողովուրդ են կանչում, ժամ ու պատարագ են անում, Կիկոսի քելեխն ուտեցնում, որ նոր հանգստանում են: